

սովորի կարծիքները և իւր ճշմարիս հայեացքն է մէջ աեղ բերում խօսում է ներքինացեալների և պատկերապաշտութեան զէմ Քաղիկանի դաւանութեան մերժման համառուսութիւններին է անում Արաց բաժանումն է պատմում խօսում է բաղարջի և մեռնի ծննդեան տօնի բաժմանման և վերջապէս Առու Աստուածածի գործածութեան մասին Մեղ Համար շատ կարեոր և հետաքրքրական է այստեղ այն տեղեկութիւնը, որ նու սուպիս է մեռնորդ հնութեան մատիւս այստեղից, իթէ չեմ սխալւում, առաջին անգամ մեր գրականութեան մէջ վկայութիւն ունինք այն հին սովորութեան մասին, որ նոր մեռն օրհնելիս հինը մէջն են ածում:

Այս բոլորից յետոյ մի բան սակայն չենք կարող անուշադիր թողնել, առ Հասարակ վիճարանական գրուածքների մէջ խիստ աչքի են ընկնում կրքերն ու մարդու հոգեկան յուզումները. զիձողը ամեն կերպ աշխատում է ծաղրել, արհամարհել, անվայել խօսքեր ուղղել իւր հակառակորդի հասցեին, գեռ և սովոր չափացուցած, զրգուուած դրութեան մէջ մի ակուակ յարձակողական դիրք է բանում և աշխատում է ամենատաք կողմերից ներկայացնել հակառակորդի կարծիքներն ու փառաբերութեան նաև անգամ պատահում է, որ այս ձեռքի յարձակուելով մոլորուած մի մարդու վերայ նորան հերետիկոսների դասը ձգերով և զիմին անէծը ու նզովք թափելով, աւելի են հաստատում նորան իւր մոլորութեան մէջ, և պարտիստի փախանակ իրենց վիճարանութեան հակառակին համանու և մոլորուածին դարձի բերելու, բոլորովին կորցնում են նորան, անձնարձակութեան տապով իրենց բովականն զրդումն և եսականութեանը:

Բայց սցանեգ Անանիա Սանահնեցին ներկայանում է, մեր առաջ իրրե ուրիշ տեսակի մի վիճարան, նու չի զայրանում, չի տաքանում ամենեն, հակառակորդներին հերետիկոս չի անուանում և նորոգում, միշտ աշխատում է և կորողանում է իրեն զապած պահել. չի խեղաթիւրում հակառակորդների կարծիքները և միցն վաս կողմերը դնում մեր առաջ, ոչ անաշառութեամբ աշխատում է պարզել ուղին ու սխալը՝ բոլորովին հանգիստ և ան-

վրդովի կերպով:

Անանիա Սանահնեցու հակամառութեան եղանակն այս է. նախ՝ մէջակ դնել հակառակորդի կարծիքը այնպէս, ինչպէս որ կայ, ապա աշխատել արամարտնորդին, կամաց կամաց, առանց շտապելու հիմնովին հերքել այն: Խնչպէս ասացինք, նա յաջողութեամբ կարողանում է, իւր այդ նպատակին իրազործել և շատ քիչ անգամ զուրս է զալիս սցանանից, այն էլ խիստ չափաւոր կերպով, այդպիսի գեպքերից է օրինակ գալոց է զատել զերկարնակն. խոքերը, տակոյն հենց այսպիսի համեստ գրգռումներն էլ շատ քիչ են պատահում և այս կազմում է խիստապէս Անանիա Սանահնեցու ամենազլիսաւոր արժանիքներից մէկը, որ նա հարկաւ ժառանգութիւն է սասցել իւր հեղ ու խաղաղասէր ունուցիչներից և Սանահնի դողոցից:

(Կը շարունակուի)

Եր. ս.

## ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ

Մէջնակարգ դպրոցների ծրագրի վերաքննութենը ռուսաց կրօնական մամուլի մէջ յառաջ է բերել կրօնի գասատւութեան խնկերը: Մեծամասնութիւնը զանգատում է, որ թէև կրօնն ըստ գլորոցի ծրագրի գլխաւոր առարկաներից է, բայց իրականութիւնը ցոյց է տալիս որ կրօնի գասաւանդութիւնը միջնակարգ դպրոցներում խիստ անմիջիթարական է. Ըստ Շեր. ԵԵԾԹ. Գորա պատճառը այն է, որ կրօնուասուցը ի նկատի ունենալով գլորոցի ծրագրը, անցնելիք գասընթացը բաժանում է գասերի, տալիս է նոր գասեր և պատուերում է, որ հետեւել անգամի համար լաւ սերտեն: Յաջորգ դասին սովորածը հարցնում և աշակերտի գիտութեան չափը որոշում է թուանշանովի Այսպէս կրօնուասոյցներ գլխաւոր սպատակին է դառնում մի կերպ ամրող ծրագիրը անցնել խել աշակերտի միակ նպատակն է լինում տէրտէրի պատմածը սերտել՝ լաւ թուանշան ստանալու համար կրօնուասոյցը ուտշ շուտ թերթում է դասագրքի չանցած

էջերը և անհանգիստ է լինում. մոտածելով՝ որ շուտով սկսուելու են քննութիւնները, բայց ինքը դեռ ամբողջ գասադիբը չի սովորեցրել; Բայց չէ՞ որ քննութեան ժամանակ բացի գպրոցի տեսչից և ուսուցիչներից ներկայ կարող են լինել բարձրաստիճան հիւրերի երբեմն և այս ինքը օրը բազանը, ուստի նոցա գործացնելու համար կրօնուսոցը աշխատումէ, որքան կարելի է, շատ վկայութիւններ անդիք անել տալ ո. Գրքից: Բայց թուչ արդիւնք է ունենում այսպիսի գասատուութիւնը, ի հորդիչ շատ ողորմելի. աշակերտի մտքից շուտով գոլորչիանում է մեքենայաբար անդիք սերտաճը ու մնում են միայն կցկուր տեղեկութիւններ. իսկ Տիրոջ խոսքը—կրօնի կենդանի աղբիւրը, աշակերտին ընդմիշտ անձանօթ է մնում:

Յօդուածագիբը ցոյց տալով կրօնի գասատուութիւն պակասաւոր կողմերը՝ ցանկութիւն է յայտնում: որ այսուհետեւ կրօնուսոցները աշակերտի մտքին պաշար տալուց զատ, մնունդ տան նաև նորա հոդեկան պահանջներին: Կրօնուսոցը իւր օրինակով պիտի ազդէ աշակերտի հոգու վերայց: Կրօնի գասատուութեան նպաստակը միջնակարգ գպրոցներում պիտի լինի՝ մեռեալ տառի փոխարժեն զարթեցնել աշակերտի հոգու մէջ կենդանի հաւատու: Մի ուրիշ յօդուածագիր երաւամը նկատում է, որ գպրոցի կրօնական—բարոյական գասատարակման գործին նախանձախընդիր պիտի հանդիսանայ ուսուցչական կազմը: Խոյս տալ այդ պարատականութիւնից պատճառանձնութիւնով թէ զա միայն կրօնուսոցի պարտականութիւնն է, կարող է անել այն մարդը, որի համար եկեղեցին և հաւատու պալուելը նշանակաւութիւն չունի: Այսպիսի համոզման և հայեցքի տէր մարդիկ բարոյական իրաւունք չունին պրաւուլաւ մանուկներին գաստիաբակ և կրթիչ լինելու:

— Աերջին ժամանակներս քահանայական ինքիրը մեր մէջ ստանում է որոշ գործնական ուղղութիւն. հակառակ կողմերը մեր մամուլի մէջ միմեանց և հոգեսրականներին զանազան անհերելի և ներելի, ակամայ և կամայ յանցանքների համար երկար ժամանակ մեղադրելուց յետոյ, եկան վերջապէս այն եղբակացութեան, որ շարեցների եթէ ոչ միակ գլխաւոր աղբեւը եկեղեցու սպասաւորների նիւթական անհամանձելի գորութիւնն է, որ բարութելով՝ ապահովելով աշխարհիկ հոգեսրականութեան վիճակն ըստ կարելոյն, կրարձագնենք նաև նորա բարոյականը:

Շատ հետաքրքրական է այս տեսակէտից Պերկոնի Ենտուու-ի մի յօդուածագ Գպագուած ինդիքը վերնագրով, որ վերաբերում է քառանաներին նիւթապէս ապահովեցնելու պա-

հանջին: Հեղինակն այդ յօդուածագի գիւղական քն. անուան տակ նկարագրում է ուռու դիւղական հոգեսրականութեան անհամանձելի գորութիւնը, անապահով վիճակը: Ցոյց է տաւելու թէ ինչպէս այստեղից յառաջ են գալիս մի շարք անպատռաբեր անտեղութիւններ և քահանայի կոչման անպատշաճ, յաճախ և նուատացնող գործեր: Իրօք, շատ անդամ օրինակելի եռանդի տէր, բարի ցանկութիւններով լեցուած, ժողովրդին ծառայելու պատրաստակամ մէկը վերջ ի վերջոյ ծանրանում է ժողովրդի ուսին, գործոնութիւնների տեղիք է տալիս, մինչև իսկ յարուցանում է իր գէմ ատելութիւն որովհետեւ իր մեծ ընտանիքը պահնելու, քիչ թէ շատ մարդավայել ապելելու, որդիքերանց կըթութիւն տալու համար ստիպուած է պնդերես մինել որոշ կարգերի համար վարձատրութեան գիւն բարձրացնել \*: միւս կողմից իրօք իսկական արժանաւորութիւններից զուրկ բայց շնորհիւ կորագլխութեան գիւղացու տուածուած է միայն այս կողմով: Քահանաների իրար գէմ ունեցած կոիւները, անախորժութիւնները, հարուստների, աղաների առաջ գլուխ ծռելը ջանքը նոցա աշքը քաղցրացնելու ևն ևն, բայրը յառաջ է գալիս, հեղինակի կարծեցու նոցա անապահով վիճակից և վարձատրութեան այն եղանակից, որ մնդունուած է այժմ ուսւ եկեղեցու մէջ \*\*, այն է կամաւոր նուիրատութիւնը: Պակաս անպատռաբեր չէ ուսւ հոգեսրականութեան համար և հետեւեալ երեսյթը. ըստ Ազր. Ենտ. ուսւ գիւղական հոգեսրականութեան գրեթեթիչ շի մասնակցում հակաքերցողական ընկերութեանց և եռանգով չի կռւում ուսւ ժողովրդի մէջ տարածուած արքեցութեան գէմ: Օրինակ, ամբողջ Ստաւրապոլի նահանգում մի այգափիսի ընկերութեան միայն կայ Արքագիրէ գիւղում: անոր էլ տեղական հոգեսրականութիւնը չի մասնակցում: ուսւ հոգեսրականութիւնը շատ թոյլ գործակցութիւն է ցոյց տալիս նաև ժողովրդի արքեցողութեան գէմ կռւող հոգաբարձութեանց, այլ մինչև իսկ որոշ շափով շահագործում է ժողովրդի արքեցողութիւնը յօդուածագի տէրին: Այս տէրեղ և ցաւալի երեսյթի պատ-

\* Ուսւ զիւթէ ամեն մի ծխառէր քահանայ գիւղերում դնում է որոշ զներ (ուսկա) այս կամ այն կարգի համար: Այս, ի հարկէ, օրինական նշանակութիւն չունի, բայց բարձր իշխանութիւնը չի արդելում:

\*\* Նոյնը ուրիմն և միը մէջ:

ճառը ըստ Պերկ. Ենթ. այն է, որ քահանաները  
գիւղերում ստանում են իբրև տուրք զի՞նի և օղին  
մասնակցում են քեփերին և ստիպուած են իրանց  
և յաճախ սարքել խնջոյքներ, որոնց վերջա-  
նում են արքեցողութեամբ Այսպիսի տուրքերը  
թէն արքելուած են կանոնական որոշումներով՝  
բայց սրբինետե հոգեւորականութեան ապահովու-  
թեան խողմ, աղքատիկ միջոցներից մէկն են, չե-  
լիքանում այդ տղեղ սովորութիւնը Այսպիսի  
չարքեները վերացնելու և հոգեւորականութիւնը  
իր կոչման բարձրութեան վերայ զննելու միակ  
միջոց նոցա նիւթականը ապահովեցնեն է, պե-  
տական դանձարանից քահանաներին վայելու  
առմիկ նշանակելով։ «Մենք պատրաստ ենք  
եկեղեցուն և պետութեան ծառայելու, մենք  
լուս կկրնենք մեր կոչման ծանրութիւնը, մենք  
ուրախ կեննենք ժողովրդին օգնելու՝ ժողովրդին,  
որ մեզ կերակրում է, և ի ըլուզ որտէ ցանկա-  
նում ենք նրա վզին չծանրանալ, ասում է յօ-  
դուածադիրը» բայց անկեղծ և սրտանց խնդրում  
ենք միայն մի բան, ազատել մեր մեր գործունեու-  
թիւնը դժուարացնող, նեղող կամաւոր նուիրա-  
տութիւններից, ազատիկ մեղ մուրացկանութիւ-  
նից հոգի և միաք վրդովեցնող առուտուրից Առ-  
տօնց տաձարում, որ նուաստացնում և խայ-  
տառակառ է ուղղափառ հոգեւորականութիւնը;  
Ազա հեղինակը հերքելով այն կարծիքը, թէ քա-  
հանաները այդ գէպօրում կը առնան չընովնելիներ,  
և կիբաթերուեն իրենց ու կոչման ձևականօրէն՝  
աւելացնում է. «Ոչ, մեր գառն փորձով ձեռք-  
բերած խորին համոզունքով՝ թոշակը ուղղա-  
փառ հոգեւորականութեան կրերէ միայն օգուտ,  
ջանաչէ հովիւններին միջոց կտայ աւելի ազա-  
տութեամբ գործել իրենց ասպարէցում, ազատ  
ժամեր ունենալու առ որ առաջարկ հանդի է կայսեր»

Առաջ կատարելու պահանջմանը բառացի ասաբը՝  
Ուստի հոգեօրականութեան տնտեսական  
ապահովութեան տեսակէտից շատ կարևոր է և  
հիմնականը.

Մուսաց եկեղեցին Նորին Կայսերական Մեծ  
ծովթեան առանձին խնամքի առարկան է, իբրև  
Կայսերական և պետական տիրող կարգերի ա-  
մենազօրեղ Նեցուկներից մինչը Նա ըազմեցս ցոյց  
է սուել և բարձր հովանաւորութեւնը և հոգա-  
ծովթեւնը դէպի ուստ եկեղեցին, Այսպիսի Խը-  
սամբներից մէկն է և վերջերս ըստ բարձու հոգա-  
մանի կազմուած յանձնաժողովը՝ Պետքը ուրգի ս,  
Անտանիոս մետրապոլիտի Նախագահութեամբ, որ  
պատակ ունի մշակել և լրացնել ուստ եկեղեցու  
պաշտօնեաների կենսաթոշակի հարցը:

Այս նոր քաղցի փոխութեանը պիտի զերաբերը  
ինչպէս կենսաթոշակի իրաւատեք անձանց և ժա-  
մանակին, այնպէս և կենսաթոշակի քանակին:  
Մինչև այժմ՝ օրինակի, իրաւունք ունեին կենսա-

թոշակի միայն քահանաները և սարկաւագները՝ այժմո նոյն իրաւունքը պիտի վայելեն և սաղմուասացները և նոյցա այրիները և որբերը, ժամանակամիջոցի խնդիրը գրեթէ մնում է անփոփոխ լրիւ կենսաթոշակ ստանալու համար սահմանում է 35 տարի։ Զգալի կերպով բարձրանալու է կենսաթոշակի քանակը. ամենաշատը 420+, որ պիտի ստանան մայր եկեղեցիների աւագերէցները և 90+ սաղմոսասացները։ Բայց կենսաթոշակից պիտի տրուի նաև միանգամից օժանդակութիւն կենսաթոշակի ժամանակամիջոցը լրացնող անձանց և նոյցա ընտանիքներին։ Եյս բարեփոխուած ծրագիրը կենթարկուի պետական խորհրդից քննութեան և կառաջարկուի ն։ Կայսերական Մեծութեան բարեհայցողութեան։ Եյս խնդրի առթիւ Պերկ. Ենտ. իրաւամբ նկատում է, որ սա մի նոր շնորհք, ողորմութիւն է Խնդրակալի կողմից գէալի ուուս եկեղեցականութիւնը, որը նոր եռանդով և սիրով կակսէ ծառայել իր Ահճապետին։ Միւս կողմից, աւելացնում է ուուս եկեղեցու ըերան թերթը, ուուս հոգևորականութիւնը իւր գործունէութեամբ յօդուտ եկեղեցու և հայրենիքի, կարելի է ասել, արժանի է Խնդրակալի այս շնորհաց. ուուս հոգևորականութիւնը, որպէս գատակարգ, արմատական և էական մի տարը է ոչ թէ միայն եկեղեցական —հասարակական, այլև պետական կեանգում...։ Մօտիկ անցեալում, շարունակում է թերթը, ըստ բարձու հաճութեան ուուս հոգևորականութեան է յանձնուած ժողովրդի կրթութեան գործը իրեւ ուուս կեանքի պատմական հիմունքների ամենայլուածի նախանձախնդրի և պահպանողի Ռուս հոգևորականութիւնը ուղղութիւն է տալիս ժողովրդի խզմնն, արթուն աչքով հսկում, որ նա ամուր պահէ իւր հաւատարիմ հպատակութեան երգումը և սրտումն ունենայ Աստուծոյ երկիւղը։ Մեծ մասամբ թարգման է հանդիսանում նաև կառավարութեան մի շարք կարգադրութեանց, ուկաղների, Կայսերական ողորմութեանց ևն։ Պերկ. Ենտ. ցոյց տալու համար, թէ որքան կարեւը պետական նշանակութիւն ունի ուուս եկեղեցին, մէջ է ըերում մի գերմանացի պատուական կարծիքը, թէ Շիուռասատանը իր պետական միութիւնը պարտական է ոչ այնքան իր սրին, որքան եկեղեցու զանգակների զոյանջիւններին։

Մենց այն նպատակով թարգմանեցինք վեր-  
ջին կտորը և մէջ սերինք վերջին կարծիքը, որպէս  
զի ցոյց տանք, թէ ինչ հայեացք ունի ռուս  
կեկղեցին իր դերի մասին ռուս կեանքի մէջ։  
Թէ որքան ճիշդ է այդ հայեացքը և ո՞ր  
չափով արդարացնում է իր վերայ առաջ կոչու-  
մը ռուս հոգկոռսականութիւնը, այդ մասին խօս-  
ուելը մեր նպատակից դուրս է։

— Ապրիլի վերջին Բոլղարիան հանդիսաւոր կերպով տօնեց տաճկաց յժից ազատուելու 25 ամեակը։ Ապրիլի 23-ին Բոլղարիայի մայրաքաղաքը հարսի պէս զարգարուած էր։ Մայր տաճարաւոմ, որտեղ ներկաց էր Բոլղարիայի իշխանը միւս աէրութիւնների ներկայացնուցիւների հետ պատարացէց յետոյ հոգեհանգիստ կատարեցին Ազէքսանդր Բ-ի համար։ Գնացքը տաճարից ուղղուեց գէտի ազգային ժողովանք որի առաջ հրատարակում այդ օրը մեծ ազատարար Ազէքսանդր Բ-ի արձանի հիմք պիտի քրուէր։ Ամբողջ ճանապարհին երդում էր 500 հոգաց բազկացած երկինք խումբը, գնացքին առանձին չուր էին տալիս ոլաւնական ազգութիւնների գոյնգոյն քրօնիները։ Մ.ողթանիքից յետոյ իշխանը գալանալով դէպի ոննուգականները արտասանեց մի զգացուած ճառ։ յայտննելով իւր ուրախութիւնը, որ նեքն է կոչուած գնելու հիմնաքարը այն մարդու արձանի որը կարող ձեռքի մեջ շարժուածով իրագործեց տանջուող ժողովազի վազուցուայ ցանկութիւնը։ որ այդ օրը Բոլղարիան դործնական կերպով ցայտնում է իւր երախտագիտութիւնը գէպի նաւ որ վերաբիշնչեց բոլղարական ժողովուրդը ազատ կեանքով ապրելու։

Վերջին ժամանակներս շատ շուտ շուտ  
յառաջ են գալիս և, Պոլսում պատրիարքական  
ճկնաժամեր, որոնց պատճառը քաղաքական, ազ-  
գային կամ կուսակցական շահեր են լինում և, յս  
տարի ևս Զատկից մի քիչ առաջ Կոստանդին Ե.  
Տիեզերական պատրիարքը գահազուրկ եղաւ սի-  
նոդականների և խառն ժողովի վճռով Սորա պատ-  
ճառը մի կողմից պատրիարքի, միևն կողմից Սինո-  
դի և խառն ժողովի մէջ ծագած տարածայնու-  
թիւններն էին, Սինոդականների և խառն ժողովի  
մեծամասնութիւնը շատ գժգոհ էր պատրիարքից,  
որ նա եռանդով չէր պաշտպանում յօյն եկեղե-  
ցւոյ շահերը Բ. գրան առաջ, Քաւական է ասել  
որ Կոստանդինի պատրիարքութեան օրով Մակեդո-  
նիայում փակուել են 32 լուսական եկեղեցիներ

Մայիսի 25-ին հաստաբուեցաւ Գէների պատրիարքանի մեծ սրահում՝ պատրիարքական ընտրութիւն Նախանայիլ մետրապոլիտ Նախագահութեամբ։ Հաւանական թե կնացուներ համարում էին Իռաքիմ Պ. և Անթիմ Ե., իրկուուն ևս արդէն մի անդամ պատրիարք եղել են։ Եկեղեցականների միաձայն հաւանութեամբ և ընտրողների ահագին մեծամասութեամբ ընտրուեց Իռաքիմ որին և Սուլթանը, հակառակ սպասուածին, իրատեսվ Տայիրիսի 28-ին հաստատեց պատրիարք։

8. Խոաբիմ յոյն եկեղեցւոյ ամենաժողովրդական  
և ականաւոր հոգևորականներից մէկն է, Օնուեկ  
է 1834թ. Կ. Պոլսում բայց առօք էն 1863թ. պատ-

իրաբրական տեղապահ իսկ յաջորդթու ին Առունելի  
մետրապոլիտ է ընտրուել: 1878 թ. ծանր պարա-  
գաների մէջ միաձայն ընտրուեցաւ պատրիարք և ար-  
քիւնաւեւ գործունելութեամբ արդարացրեց ընտրու-  
ների ակնկալութիւնները: Առանձնապէս նա պաշտ-  
պան հանդիսացաւ յօյն եկեղեցւոյ շահերին: 1872  
թ. արքէն կ. Պոլսայ կրօնական ժողովում իր ազ-  
գեցութեամբ բոլղարներին հերձուածող հաջակել  
առւեց: իսկ պատրիարք գառնալուց յետոյ բարե-  
կարգեց մի շարք եկեղեցական արտարին վարչու-  
թեան վերաբերեալ գործեր Բալգանեան թերակղզու  
վերայ և նորից վերականցնեց Տիեզերական պատրի-  
արքի հեղինակութիւնն այստեղի: Պակաս արդիւնա-  
ւէտ չէր նորա գործունելութիւնը և ներքին կեան-  
քում նորա օրով վերաբնուեց ազգային սահմա-  
նագրութիւնը: Հաստատուեցան մի շարք բարեգոր-  
ծական հաստատութիւններ: ինչպէս յիմարանոց և  
հիււանդանոց: Հոգևորականների համար կղերանոց,  
ապաստանարան: Նա հաստատեց ապարան, լրացիր  
Մեծ հօգու տարաւ նմանապէս պատրիարքարանի և հո-  
գևորականութեան ապահովութեան: Ժողովրդիլու-  
սաւ որութեան մասին: Բայց հենց այսպիսի եռանդու-  
ազգաշահ գործունելութեամբ յարուցց Բ. դրան  
դժգոհութիւնը իր դէմ և 1883 թ. ատիպուած  
եղաւ հրաժարուել պատրիարքութիւնից և հեռանալ  
մի վանք: Այս անյոդդողդ կամքի տէր: օրինափելի  
բարի եռանդի տէր հօփիւը նորից ժողովրդի միա-  
ձայն ցանկութեամբ կանցւում է յօյն պատրիար-  
քական պատասխանատու ծանր պաշտօնին:

Տ. Խոաքիմ Գ. 254-րդ տիեզերական պատրիարքն է՝ առաջինը՝ ըստ յոյն եկեղեցւոյ աւանդութեան, եղել է՝ ինչպէս յայտնի է, Ս. Անդրէաս առաքեալը (36թ.):

ମୁଦ୍ରଣ କରିଲା

Պատասխան Խորին կ. Մեծութեան Պիտիք-  
Հովհաննիս.

Σοφίη

ԵՐԱՎԵՐԻ ԾԻՆ

ԿԱՐՈՒՎԻՆԻԿՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Ենկեղծ շնորհակալիս՝ Զեղ և  
միաբանութեան վանուցն Աջմիած-  
նի, յաղագս աղօթից և բարեմաղ-  
թութեանց: